ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՈՎ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՑԻԵՆՏԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 204-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Հիմնական ակտ
Կարգավիճակ	Գործում է (13.07.2024-մինչ օրս)
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2024.06.24-2024.07.07 Պաշտոնական հրապարակման օրը 03.07.2024
Ընդունող մարմին	Առողջապահության նախարար
Ընդունման ամսաթիվ	01.07.2024
Ստորագրող մարմին	Առողջապահության նախարար
Ստորագրման ամսաթիվ	01.07.2024
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	13.07.2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«01» հուլիս 2024 թ. N 204-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐՏԱՔԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՈՎ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՑԻԵՆՏԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետը՝

Հրամայում եմ

1. Հաստատել արտաքին ականջի բորբոքումով և այլ հիվանդություններով պացիենտի վարման գործելակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. Ավանեսյան

01.07.2024

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
«01» հուլիս 2024 թվականի
N 204-Ն հրամանի

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳ

ԱՐՏԱՔԻՆ ԱԿԱՆՋԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՈՎ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՑԻԵՆՏԻ ՎԱՐՄԱՆ

1. Նոզոլոգիաների խումբ՝ ըստ հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական 10–րդ վերանայման դասակարգչի.

Հ/Հ	Կոդը	Անվանում
1)	H 60	Արտաքին ականջի բորբոքում (Otitis externa)
2)	H60.0	Արտաքին ականջի աբսցես (թարախակույտ)՝ ականջախեցու կամ արտաքին լսողական անցուղու թարախապալար, կարբունկուլ, ֆուրունկուլ
3)	H60.8	Այլ արտաքին ականջաբորբ Քրոնիկ արտաքին օտիտ՝ ԱՀՃ
4)	H61	Արտաքին ականջի այլ հիվանդություններ
5)	H61.2	Ծծմբային խցան Ծծմբի առկայություն ականջում

6)	H61.8	Արտաքին ականջի այլ ճշտված հիվանդություններ Արտաքին լսողական անցուղու էկզոստոզ
7)	H62*	Արտաքին ականջի ախտահարումներ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ
8)	H62.1*	Արտաքին ականջաբորբ՝ այլ դասերում դասակարգված վիրուսային հիվանդությունների ժամանակ Արտաքին ականջաբորբ՝ հերպեսվիրուսային (herpes simplex) վարակից (B00.1), գոտևորող որքինից (zoster) (B02.8)

2. Նոզոլոգիաների խումբը կիրառելի է՝ ըստ սույն հավելվածով սահմանված Ձև 1–ի.

Ձև 1

1)	Տարիքային խումբ (նորածին, երեխա, դեռահաս, մեծահասակ)	Նորածին, երեխա, դեռահաս, մեծահասակ
2)	Սեռ (արական, իգական)	Արական, իգական
3)	Բարդություններ (առանց բարդությունների (ԱԲ), բարդություններով (Բ))	ԱԲ, Բ (Երկրորդային վարակի միացում՝ մանրէային (բակտերիալ), սնկային, վիրուսային: Քրոնիկ, նեկրոզացնող արտաքին օտիտի զարգացում, հարականջային թքագեղձի բորբոքում, մաշկաբորբ: Ներգանգային բարդություններ: Դիմային նյարդի բորբոքում՝ դեմքի մի կողմի պարեզ/պարալիչ, թափառող նյարդի բորբոքում՝ ձայնի խռպոտություն, շնչառության դժվարացում:
4)	Հիվանդության փուլը (նկարագրել)	Կիրառելի չէ
5)	Բժշկական օգնության և սպասարկման պայմանները (բժշկական կազմակերպությունից դուրս, արտահիվանդանոցային պայմաններում, ցերեկային ստացիոնարի պայմաններում, հիվանդանոցային պայմաններում)	Արտահիվանդանոցային պայմաններում, ցերեկային ստացիոնարի պայմաններում
6)	Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձևը (շտապ, անհետաձգելի, պլանային)	Պլանային
7)	Կիրառման շրջանակը (նշել մասնագետների շրջանակը)	Քիթ-կոկորդ-ականջաբան, նյարդաբան
8)	Գանգատներ	Հիմնական ախտանիշները՝ ականջացավ, ականջից արտադրություն, քոր, օտար մարմնի առկայության զգացում ականջում, ծանրալսություն, աղմուկ ականջում: Բարդությունների դեպքում՝ դեմքի ասիմետրիա, ձայնի խռպոտություն:

9)	Անամնեզ	Վերին շնչուղիների կատառ, քթային դժվարաշնչություն, սինուսիտ, ադենոիդ հյուսվածքի գերաճ, քթի և քթըմպանի բարորակ և չարորակ նորագոյացություններ: Շաքարային դիաբետ, աղեստամոքսային համակարգի խանգարում, վարակներ, իմունային անբավարարություն:
10)	Զննման արդյունք/Ցուցում	Արտաքին լսողական անցուղում շճային/թարախային/ սնկային արտադրություն, կեղևների/թեփուկների առկայություն, այտուց, հիպերեմիա, անցուղու անանցանելիություն (այտուց, ստենոզ, էկզոստոզ), թմբկաթաղանթի հիպերեմիա, արտահայտված անոթավորում:
11)	Հոսպիտալացման ցուցում	Կիրառելի չէ

3. Բժիշկ-մասնագետի կողմից պացիենտի զննումը, խորհրդատվությունը իրականացվում է ըստ Ձև 2–ի (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը).

Ձև 2

Հ/հ	**Խորհրդատվության տեսակը**	**Տրամադրման քանակը**	
		ԱԲ	Բ
1)	Քիթ-կոկորդ-ականջաբան	1	1
2)	Նյարդաբան	0.3	0.4

4. Սույն հավելվածի Ձև 2–ում նշված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ զննման, խորհրդատվության իրականացման հաճախականությունը:

5. Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են՝ ըստ Ձև 3–ի (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը).

Ձև 3

	Լաբորատոր հետազոտություններ				
Հ/Հ	**Կոդը**	**Անվանումը**	**Տրամադրման քանակը**		**Արդյունք**
			ԱԲ	Բ	
1)	Առկա չէ	Արյան ընդհանուր հետազոտություն	0.3	1	
2)	Առկա չէ	Ասպարտատամինատրանսֆերազի (AUS) որոշում	-	1	
3)	Առկա չէ	Ալանինամինատրանսֆերազի (ALS) որոշում	-	1	
4)	Առկա չէ	Ընդհանուր բիլիռուբինի որոշում	-	1	
5)	Առկա				

	չէ	Ուղղակի բիլիռուբինի որոշում	-	1	
6)	Առկա չէ	Անուղղակի բիլիռուբինի որոշում	-	1	
7)	Առկա չէ	Կրեատինինի որոշում	-	0.2	
8)	Առկա չէ	Միզանյութի որոշում	-	0.2	
9)	Առկա չէ	Մեզի ընդհանուր հետազոտություն	0.2	1	Շեղումների հայտնաբերում
10)	Առկա չէ	Սեռոլոգիական հետազոտություններ (Հեպատիտներ Բ,Ց, սիֆիլիսի, մարդու իմունային անբավարարության վիրուսի վերաբերյալ հետազոտություն)	0.2	0.2	Հարուցչի հայտնաբերում
Գործիքային հետազոտություններ					
11)	Առկա չէ	Օտոմիկրոսկոպիա	1	1	Անցուղու այտուց, կարմրություն, խցանում, պոլիպ
12)	Առկա չէ	Աուդիոմետրիա	0.5	0.5	Հաղորդչական ծանրալսության հայտնաբերում
13)	Առկա չէ	Տիմպանոմետրիա	0.5	0.5	Միջին ականջի ֆունկցիայի գնահատում (A, B, C տիպի կորագծերի կազմում)
14)	Առկա չէ	Ռինոսկոպիա	1	1	Քթի խոռոչի այտուցի, խեցիների հիպերտրոֆիայի հայտնաբերում
15)	Առկա չէ	Ականջի էնդոսկոպիկ հետազոտություն	0.5	0.5	Անցուղու այտուցի, կարմրության, խցանման, պոլիպի հայտնաբերում
16)	Առկա չէ	Ֆիբրոռինոֆարինգոլարինգոսկոպիա	0.2	0.2	Ձայնալարերի նորմալ պատկեր կամ հիպերեմիա
17)	Առկա չէ	Ականջից քսուքի քննություն	0.3	0.3	Հարուցչի հայտնաբերում

6. Սույն հավելվածի Ձև 3–ում սահմանված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ հետազոտության իրականացման հաճախականությունը:

7. Օգտագործվող դեղերի ցանկը սահմանվում է ըստ Ձև 4–ի (անհրաժեշտության դեպքում նշել հիվանդության փուլերը).

Հ/հ	Անվանում, դեղաչափ, դեղաձև, փաթեթավորում	Անվանում /ջեներիկ/	Չ/Մ	Միջինացված ցուցանիշ՝ տրամադրման հաճախականություն	Միջին օրական չափաքանակ	Բուժման կուրսի միջին չափաքանակ	Օրերի քանակ
1)	Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) ականջակաթիլներ 40մգ/գ+10մգ/գ	Ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) ականջակաթիլներ40մգ/գ+10մգ/գ	սրվակ կաթոցիկ	1	3մլ	15մլՖ	7
2)	Ռիֆամիցին (ռիֆամիցին նատրիում) ականջակաթիլներ 26մգ (20000ՄՄ)/մլ	Ռիֆամիցին (ռիֆամիցին նատրիում) ականջակաթիլներ 26մգ (20000ՄՄ)/մլ	շշիկ կաթոցիկով	0.5	5կաթիլ օրը 3 անգամ	1ֆլակոն	10
3)	Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն դեղակախույթ աչքի/ականջի 3մգ/մլ+1մգ/մլ	Ցիպրոֆլօքսացին (ցիպրոֆլօքսացինի հիդրոքլորիդ), դեքսամեթազոն դեղակախույթ աչքի/ականջի 3մգ/մլ+1մգ/մլ	սրվակ-կաթոցիկ	1	3մկ	15մլՖ	7
4)	Ֆլյուկոնազոլ 0.3 %	Ֆլյուկոնազոլ 0.3 %	սրվակ-կաթոցիկ	1	3մլ	15մլՖ	14
5)	Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ) 10մգ/գ	Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ) 10մգ/գ	սրվակ-կաթոցիկ	1	-	1	7
6)	Հիդրոկորտիզոն (կաթիլներ) 25մգ/5մգ/1մլ	Հիդրոկորտիզոն (կաթիլներ) 25մգ/5մգ/1մլ	սրվակ-կաթոցիկ	1	3մլ	15մլՖ	7
7)	Նանոկոլլոիդային արծաթ	Նանոկոլլոիդային արծաթ	կաթիլ	1	3մլ	15մլՖ	14
8)	Ֆլյուկոնազոլ 0.3 %	Ֆլյուկոնազոլ 0.3 %	սրվակ-կաթոցիկ	1	4մլ		14
9)	Նիտրոֆուրալ, տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ), ֆենազոնականջակաթիլներ (լուծույթ)2,5մգ/մլ+31,25մգ/մլ+87,5մգ/մլ	Նիտրոֆուրալ, տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ), ֆենազոնականջակաթիլներ (լուծույթ)2,5մգ/մլ+31,25մգ/մլ+87,5մգ/մլ	սրվակ կաթոցիկ	1	1մլ	5մլ	5
10)	Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) քթակաթիլներ 0,5մգ/մլ	Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ) քթակաթիլներ 0,5մգ/մլ	շշիկ-կաթոցիկ	0.5	3մլ	15մլ	7
11)	Մոնտելուկաստ (մոնտելուկաստ նատրիում) 5մգ	Մոնտելուկաստ (մոնտելուկաստ նատրիում) 5մգ	դեղահատեր ծամելու	0.5	0.01գ	20հաբ	10
	Ֆլյուտիկազոն						

12)	պրոպրիոնատ 0,05%	Ֆլյուտիկազոն պրոպրիոնատ 0,05%	կաթիլ	0,5	50-200մկգ	9.9մլ	14
13)	Մոմեթազոն ֆուրոատ մոնոհիդրատ 50մկգ	Մոմեթազոն ֆուրոատ մոնոհիդրատ 50մկգ	կաթիլ	0.5	50-200մկգ	140 փչիկ	20
14)	Լևոցետիրիզին (լևոցետիրիզինի դիհիդրոքլորիդ) կաթիլներ ներքին ընդունման 5մգ/մլ	Լևոցետիրիզին (լևոցետիրիզինի դիհիդրոքլորիդ) կաթիլներ ներքին ընդունման 5մգ/մլ	կաթիլ	0,5	5մգ	70մգ	14
15)	Դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ) լուծույթ ներարկման 4մգ/մլ	Դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիումի ֆոսֆատ) լուծույթ ներարկման 4մգ/մլ	ամպուլա	1	8մգ	36մգ	5
16)	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ	դեղա-հատեր	0.5	48	220մգ	11
17)	Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ),- քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) 500մգ+125մգ, 875մգ+125մգ	Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ) 500մգ+125մգ, 875մգ+125մգ	դեղա-հատեր	1	0.5-1գ	2.5-5գ	7
18)	Կլարիթրոմիցին 250մգ, 500մգ	Կլարիթրոմիցին 250մգ, 500մգ	դեղա-հատեր	1	0.5	3.5գ	7
19)	Ցեֆեպիմ (ցեֆեպիմի հիդրոքլորիդ) դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ	Ցեֆեպիմ (ցեֆեպիմի հիդրոքլորիդ) դեղափոշի ներարկման լուծույթի 1000մգ	սրվակ	1	2	14գ	7

8. Սույն հավելվածի Ձև 4–ում սահմանված՝

1) նշանակված դեղի նկատմամբ անհատական անտանելիության դեպքում ավագ բուժաշխատողը իրավասու է նշանակել այլ դեղ.

2) տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ դեղի օգտագործման հաճախականությունը:

9. Բուժական այլ միջոցառումներ սահմանվում են Ձև 5–ում (անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է նշել հիվանդության փուլերը).

Ձև 5

Հ/հ	**Բժշկական ծառայության տեսակը**	**Տրամադրման քանակը**	
		ԱԲ	**Բ**
1)	Ականջի լվացում, միկրոսկոպի հսկողության տակ՝ վակուում արտածծիչով	1	1
2)	Ականջի լվացում հակասեպտիկ լուծույթներով և դեղի ներմուծում	1	1

10. Սույն հավելվածի Ձև 5–ում սահմանված տրամադրվող քանակների համար նշվում է միջինացված ցուցանիշ, նկատի ունենալով, թե ինչ հաճախականությամբ է իրականացվում տվյալ բուժական միջոցառումը: Հաճախականության հաշվարկման միավորը պետք է լինի 0-ից 1 միջակայքում և հաշվի առնի նմանատիպ 100 դեպքերում տվյալ բուժական միջոցառման կիրառման հաճախականությունը:

ԳՈՐԾԵԼԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

1. Գլասկոկ-Շամբո. Ականջի վիրաբուժություն-2010. ԱՄՆ/Glasscock-Shambaugh. Surgery of the ear-2010, USA

2. Դերալդ Ե. Բրակման, Կլաֆ Շելտոն, Մոիգա Ա. Արրիգա, Ականջի վիրաբուժություն – Էլսեվիեր - 2016 /Derald E. Brackmann, MD, Clough Shelton, MD, Moisռs A. Arriaga, MD, MBA. Otologic surgery.- Elsevier-2016

Պաշտոնական հրապարակման օրը՝ 3 հուլիսի 2024 թվական: